

ՄՈՒՐԱՏ-ՈՒՓԱՅԷԼԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԷՆ

Ամէն տարի մեծ հանդիպում մըն է որ տեղ կու տանք թերթիս էջերուն մէջ մեր Ազգին նորա-ծիլ յոյսերուն որոնք աշխարհիս շորս հովե-րէն՝ Վարժարանիս սրբազան բուրաստանին մէջ կը ծաղկին, ու հեռզհեռէ փոխադրուելով գիտութեան բարձրագոյն ու լուսաւոր տաճար-ներու մէջ՝ իրենց վերջին կատարելագործումը կը ստանան ու այնպէս կ'երթան զարգարելու շայութեան փոքր ածուց:

Ուրիշ առիթի մը վերազանելով ընդհանուր տեղեկատուութիւն մը, նոր տարւոյն և նոր կեանքի սեմին վրայ՝ բարեմաղթութենէ մաւելի հը-րապարտիչ անուններ է որ կ'արձանագրենք:

Մեր Վարժարանը 1918-1930 շրջանին ծուռած է Հայ ազգին 103 ընթացաւարտ երիտասարդ-ներ, որոնցմէ 60ը շարունակած են իրենց ուսու-մը իսպառիյ կամալսարանները, փոքրիկ մաս մ'ալ Գաղղիա, Պելճիքա, Աւստրիա. մեծամաս-նութեան նուիրումն եղած է մշտ գիտական մաս-նանդիւրու:

Նախապէս փատուան էր որ մեր կամալսարա-նական ուսանողներու կեդրոնատեղին կը կազ-մէր. բայց վերջին տարիներուն՝ շնորհիւ Միւ-թարեան Ուսանողարանին և տեղւոյն Ուս. Մի-ութեան՝ Միլան քաղաքն է որ Չճի շափ ուսա-նողներ 1929-30ի շրջանին տեղւոյն կամալսա-րաններէն մասնագէտի տիտղոս ստացան:

- Ալեմշահ Գոռքէն՝ Երաժշտագէտ
- Ալեմշահ Կարպիս՝ Բնաւոյծ
- Արսլանեան Նուպար՝ Բժիշկ
- Գառաֆեան Վահէ՝ Ճարտարագէտ
- Եղիկեան Սեդրոս՝ Բնաւոյծ
- Մարիմեան Պարոյր՝ Ճարտարագէտ

Փաւիայի կամալսարանէն վկայական ստացան՝
Առաքելեան Յովհաննէս՝ Գեղադրծ
Թախտաձեան Էրնեստ՝ Բնաւոյծ

- Փատուայի կամալսարանէն վկայուածներ՝
- Երվիկեան Վահրամ՝ Բժիշկ
- Մարտիկեան Պարոյր՝ »
- Միլտոնեան Արտաշէս՝ »
- Պապայեան Լեւոն՝ »
- Պոտոշրեան Յովհաննէս՝ »
- Կիրենուլլը - Փարիզէն՝ վկայուածներ՝
- Հոտադեան Արոյ՝ Ճարտարագէտ-քիմիագէտ
- Քեւեձեան Յովհաննէս՝ Ճարտարագէտ

Ուրախուի է որ պսակաւորներու պարապը կը լեցնեն նոր ուսանողները:
1930-31 տարեշրջանին բժշկոչրեան սկսած են հետեւել՝

- Եփրեմեան Սահակ
- Կիզգեան Էմիլ
- Կիւրճեան Պետրոս
- Յակոբեան Յարութիւն
- Սիւրմէլեան Յովհաննէս

Ճարտարագիտութեան ուսանողներ՝
Սգրչեան Արամ
Տիարեան Բարսեղ

Բնաւոժութեան ուսանող՝
Երամեան Յովհաննէս

Աւելորդ է ըսել թէ սրբան անձկութեամբ Մայր Հայրենիք կ'ուզէն վերադառնալ արդէն վկայ-ուածները. առաջին առիթին անոնք հոն պիտի թուին՝ իրենց պաշտելի ազգին ի սպաս զնկու իրենց բոլոր ձիրքերն և աշխատանքը հայրենիքի բարբորութեան և մեծութեան:

Թէ՛ պսակաւորներուն և թէ՛ հետեւորդներուն մեր մաղթանքը՝ յաշողութեան և երջանկութեան

Հանդիպով կ'իմանանք որ Ազգեան Օննիկ մեծ յաշողութեամբ աւարտած է բժշկութեան ընթացքը փաւիայի կամալսարանին մէջ:

